



Թագուհի ԱՖԱԶԱՆՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի

ԳՐԱՎԻ՝ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԵՐԿԱԿԻ ԲՆՈՒՅԹԸ

Պարտավորությունների ապահովման միջոցների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում գույքի գրավը: Այն քաղաքացիական իրավունքի դասական ինստիտուտներից մեկն է: Գրավի վերաբերյալ պայմանագրերն առաջացել են Հին Հռոմում՝ որպես լրացուցիչ համաձայնություններ: Հին Հռոմում պարտատերերը պարտավորությունների բավարարում ստանալու նպատակով պարտապաններին տալիս էին ժամանակ: Պարտավորությունների ոչ պատշաճ կատարումից կամ չկատարումից խուսափելու նպատակով պարտատերերը պահանջում էին պարտապանների կողմից ստանձնած պարտավորությունների ապահովում գրավի միջոցով: Ապահովման շնորհիվ նրանք կարողանում էին բավարարում ստանալ գրավի առարկայից պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: Գրավի իրավունքի պատմությունը ձևավորվել է չորս էտապների շրջանակում: Հին Հռոմում, որպես գրավի պայմանագիր, ծառայել է «nexum»-ը, այնուհետև «fiducia»-ն, դրանից հետո «pignus»-ը և ի վերջո «hypotheca»-ն: «Nexum»-ի էությունն այն է, որ պարտապանը, որպես վաճառքի միջոց օգտագործում էր իրեն, ընտանիքին և իր ամբողջ կարողությունը: Տարիների ընթացքում, «nexum»-ը վերացվեց՝ համարվելով որպես անմարդկային վերաբերմունք պարտապանի նկատմամբ: Ինչ վերաբերվում է «fiducia»-ին, ապա շատ հեղինակների կարծիքով այն կրել է միայն բարոյական նշանակություն և հիմնված է եղել հավատարմության վրա, ինչի շնորհիվ էլ հենց ստացել է իր անվանումը: «Fiducia»-ն շարունակել է գոյություն

ունենալ, սակայն տարբեր անվանումներով՝ «pignus» և «hypotheca»: «Pignus»-ը համարվել է որպես գրավի իրավունքի վերաբերյալ պայմանագիր, որի առարկա կարող էին հանդիսանալ կամ անշարժ, կամ էլ շարժական գույքը: Ինչ վերաբերում է «hypotheca»-ին, ապա վերջինս հանդիսանում էր անշարժ գույքի գրավը, ինչը մաս արտահայտված է ժամանակակից իրավական համակարգերում: Գերմանական, ֆրանսիական, ինչպես մասնաճյուղային իրավական համակարգերում անշարժ գույքի գրավը նույնպես ստացել է հիփոթեք անվանումը^{1,2}:

Գրավի իրավունքն իր երկակիության պատճառով բազմաթիվ վեճերի տեղիք է տվել տեսության մեջ, այնուամենայնիվ, մինչ օրս միասնական մոտեցում չի ձևավորվել: Գրավի իրավունքի բնույթի վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսակետներ: **Հայաստանի Հանրապետությունում** գրավի իրավունքը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի չորրորդ բաժնում՝ «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ», 15-րդ գլխում՝ «Ընդհանուր դրույթներ գրավի մասին»: Հետևյալ կառուցվածքային բաժանումից հասկանալի է դառնում, որ հայկական իրավական համակարգը գրավի իրավունքը դիտում է որպես իրային: Քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավի իրավունքը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի **գույքային իրավունքն է**, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Առհասարակ գրավի իրավունքի բնույթն ընկալելու համար

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ Իշխանություն

անհրաժեշտ է տարանջատել ու պարզաբանել իրային և պարտավորական իրավահարաբերությունների հասկացությունը և դրանց առանձնահատկությունները:

Իրային իրավունքն իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական նորմերի ամբողջություն: Քաղաքացիական իրավունքն իրային է համարում սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը, որն իրավագոր առձին հնարավորություն է տալիս իրականացնելու իր բնույթով բացարձակ ներգործություն անհատապես որոշված իրի նկատմամբ: Ընդհանուր առմամբ իրային իրավունքի յուրահատկությունը կայանում է հետևյալում՝

- Որպես իրային իրավունքի առարկա հանդես են գալիս իրերը,
- Իրային իրավունքը կրում է բացարձակ բնույթ,
- Կապված լինելով իրերի հետ հետևում է դրանց,
- Իրենից ենթադրում է սեփականատիրոջ ներգործությունը սեփական գույքի նկատմամբ և անորոշ շրջանակի անձանց պարտականությունը՝ հարգել սեփականատիրոջ գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը:

Ինչ վերաբերվում է **պարտավորական իրավահարաբերություններին**, ապա դրանց և իրային իրավահարաբերությունների միջև առկա են բազմաթիվ տարբերություններ: Նախևառաջ պարտավորական իրավահարաբերությունների շրջանակում պարտադիր պայման է կոնկրետ սուբյեկտների առկայությունը (օրինակ՝ պարտատեր-պարտապան): Այս իրավահարաբերությունների շրջանակում իրավագոր առձին իրավունքը կիրառործվի պարտավոր առձին ակտիվ գործողությունների միջոցով: Օրինակ՝ առուվաճառքի պայմանագրի շրջանակներում պարտատիրոջ իրավունքը կիրառործվի այն դեպքում, երբ պարտապանը կատարի իր ստանձնած պարտավորությունը (օրինակ՝ վճարի հանձնված գույքի դիմաց գումարը): Համապատասխան

նաբար պարտապանի իրավունքն էլ կիրացվի պարտատիրոջ կողմից կոնկրետ գործողությունների միջոցով (օրինակ՝ հանձնի խոտացված գույքը):

Պարտավորական իրավահարաբերությունների առանձնահատկություններն են

- Իրենից ենթադրում է պարտապանի ակտիվ գործողություններ,
- Կրում են հարաբերական բնույթ:

Գրավի իրային կամ պարտավորական լինելը պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է գրավի իրավունքին: «Սեյվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման համաձայն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց: Գրավի իրավունքին բնորոշ են իրային իրավունքներից ներհատուկ հետևյալ առանձնահատկությունները. «բացարձակ իրավունքը». գրավի իրավունքին համապատասխանում է բուրդի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ հոդված), «հետևելու իրավունքը». գրավի իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկան անցնում է այլ անձի սեփական



նության ներքո:

«Անելիք Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Կենտրոն նոտարական տարածքի, Սամսոն Ղարիբյանի և մյուսների թիվ ԵՔԴ/0126/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար: Գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Բացի վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից հարկ է նաև անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոմվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող «գույք» եզրույթը սահմանափակված չէ միայն ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով, այն իր մեջ ընդգրկում է նաև ակտիվներ հանդիսացող որոշ այլ իրավունքներ ու շահեր, որոնցից է, օրինակ, պարտավորության գույքային ապահովման իրավունքը (**տե՛ս Gasus Dossier - Und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով ՄԻԵԳ-23.02.1995 թվականի վճիռը, 53-րդ կետ**):

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից եզրահանգում ենք, որ այն ճանաչում է գրավի երկակի բնույթը՝ շեշտադրում կատարելով դրա ապահովող գործառնությունից, որից դուրս այն իրավական արժեք չունի: Բացի այդ՝ ճանաչում է նաև գրավի ակցեսոր-

րային լինելը: Իսկ մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ ճանաչում է գրավի բազմատարրությունը՝ չսահմանափակվելով միայն իրերի նկատմամբ սեփականության իրավունքով:

Տարբեր իրավական համակարգեր գրավի իրավունքի երկակիության վերաբերյալ ցուցաբերել են տարբերվող մոտեցումներ: Ժամանակակից **ռուսական** քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ գրավի իրավունքը հանդիսանում է որպես պարտավորական իրավունք: Դրա մասին վկայում է Ռուսաստանի Քաղաքացիական օրենսգրքում գրավի իրավունքի կառուցվածքային տեղը: Այն ներառված է «Ընդհանուր հասկացություններ պարտավորությունների վերաբերյալ» բաժնում, «պարտավորությունների ապահովման միջոցներ» գլխում: Գրավի պարտավորական բնույթը հաստատվում է օրենսգրքի որոշակի նորմերում, որոնք կարգավորում են գրավին վերաբերող հարաբերությունները: Նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ռուսական քաղաքացիական օրենսդրությունը գրավը համարում է պարտավորական իրավունք հետևյալ հանգամանքների շնորհիվ: Այսպիսով՝ Ռուսաստանի քաղաքացիական օրենսգրքի 336-րդ հոդվածի 1-ին մասից եզրահանգում ենք, որ գրավի առարկա կարող են լինել ոչ միայն իրերը, այլ նաև գույքային իրավունքները: Ինչպես հայտնի է, գույքային իրավունքները՝ որպես ինքնուրույն օբյեկտ, ոչ մի պարագայում չեն կարող ծառայել իրային իրավունքների համար առարկա: Երկրորդ, 336-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ գրավի իրավունքը կարող է նախատեսվել այնպիսի իրերի նկատմամբ, որոնք գրավատուն ձեռք է բերելու ապագայում: Այս հարաբերությունների նկատմամբ ոչ սեփականության իրավահարաբերությունները, ոչ էլ այլ իրային իրավունքները չեն կարող կիրառվել: Ի վերջո սեփականության իրավունքը ծագում է դրա հանձնման պահից, իսկ եթե խոսքը գնում է նոր ստեղծվող անշարժ

գույքի մասին, որը հազվադեպ է օգտագործվում որպես գրավի առարկա, դրա նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է պետական գրանցման պահից³:

Ֆրանսիական օրենսդրությունը գրավը դիտում է որպես իրային իրավունք ինչը արտահայտված է նաև հայկական օրենսդրությունում: Գրավի իրավունքի իրային լինելը հավաստվում է Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքում ամրագրված հետևյալ դրույթից՝ հիփոթեքը իրային իրավունք է անշարժ գույքի նկատմամբ կապված պարտավորության չկատարման հետ (*L'hypothèque est un droit réel sur les immeubles affectés à l'acquittement d'une obligation*)⁴:

Ղազախստանը գրավի իրավունքը դիտում է որպես պարտավորական իրավահարաբերություն: Այս պարզ է դառնում Ղազախստանի քաղաքացիական օրենսգրքում գրավի իրավունքի կառուցվածքային տեղից: Ղազախստանի քաղաքացիական օրենսգրքում գրավի իրավունքն ամրագրված է պարտավորական իրավունք բաժնում՝ պարտավորությունների ապահովման միջոցներ գլխում:

Գրավի իրավունքի բնույթի վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսակետներ: Այս հարցի շուրջ իրենց դիրքորոշումներն են արտահայտել բազմաթիվ տեսաբաններ և պրակտիկ իրավաբաններ: Ոմանք գրավի իրավունքը դիտում են որպես պարտավորական, մյուսները որպես իրային: Կան հեղինակներ, ովքեր ընդունում են գրավի իրավունքի երկակի բնույթը: Ռուս տեսաբանները տարիներ շարունակ իրենց դիրքորոշումներն են արտահայտել գրավի իրավունքի բնույթի վերաբերյալ: Հեղինակների մոտեցումները բաժանվում են մի քանի խմբի: Նրանցից Գ. Ֆ. Շերշենեվիչը և Լ. Ա. Կասսոն գրավը դիտում են որպես իրային իրավունք, իսկ Լ. Ա. Խվոստովը, Մ. Ի. Բրազինսկին, Կ. Ա. Աննեկովան և այլոք այն դիտում են որպես պարտավորական: Եվ վերջապես հատկանշական է այն փաստը, որ հեղինակներից ոմանք էլ ընդունում են գրավի

երկակի բնույթը՝ ընդունելով այն փաստը, որ գրավն իր մեջ պարունակում է թե պարտավորական և թե իրային տարրեր:

Լ. Ա. Կասսոն գրավը դիտում է որպես իրային իրավունք: Իր «Հասկացություն ժամանակակից գրավի իրավունքի մասին» աշխատությունում նա գրավը նկարագրել է այնպիսի իրավունքը, որն առաջանում է հօգուտ գրավառուի ուրիշի գույքի նկատմամբ ունեցած իրավունքով: Ի տարբերություն պարտավորության ապահովման այլ միջոցների, գրավը ոչ օգտագործման, ոչ էլ տիրապետման նպատակ չի հետապնդում, այստեղ կարևորը գրավի առարկայի արժեքն է⁵:

Այս հարցի շուրջ իր տարբերվող տեսակետն է արտահայտել **Ա.Ա. Վիշնևսկին**, ում համոզմամբ պարտավորության ապահովման միջոցներից միայն գրավի իրավունքն է կրում իրային-իրավական բնույթ: Այս դեպքում գրավի իրավունքը անմիջականորեն վերաբերվում է գրավադրված առարկային, այլ ոչ թե գրավատուի անհատապես, և իրենից չի ենթադրում վստահության վրա հիմնված հարաբերություններ պարտատիրոջ և պարտապանի միջև⁶:

Վ. Վ. Վիտրյանսկին գրավի իրավունքը դիտում է որպես պարտավորական իրավահարաբերություն՝ հիմք ընդունելով մի շարք դրույթներ: Նախևառաջ նա գրավը դիտում է որպես պարտավորական իրավահարաբերություն, քանի որ գրավի առարկա կարող են հանդես գալ ոչ միայն իրերը, այլ նաև գույքային իրավունքները, որոնք ինքնուրույն օբյեկտ չունեն և օժտված չեն իրային իրավահարաբերության առանձնահատկություններով: Վ. Վ. Վիտրյանսկին նշում է նաև, որ գրավի իրավունքը կարող է ծագել ապագայում, այն դեպքում, երբ սեփականության իրավունքը գույքի նկատմամբ դեռ չի ծագել: Գրավի պարտավորական լինելն ապացուցվում է նաև այն հանգամանքով, որ գրավատուն կարող է փոխարինել գրավի առարկան դրան հավասարարժեք գույքով⁷:



Գիտնական **Ի. Ի. Պուստամալուովի** համոզմամբ գրավի բնույթի երկակիության վերաբերյալ վեճը իրենից տեսական նշանակություն չի ներկայացնում: Այն ինչ այստեղ կարևոր է, դա գրավի իրավունքի ապահովող գործառույթն է: Գրավի իրավունքն իր մեջ պարունակում է թե պարտավորական և թե իրային բնույթի տարրեր, որոնք ունեն մեկ ընդհանուր նպատակ՝ պարտատիրոջ կարգավիճակի բարելավում պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: Իր տեսակետի հիմնավորվածությունն ապացուցելու համար գիտնական մատնացույց է անում Ռուսաստանի քաղաքացիական օրենսգրքի բովանդակությունը, որի համաձայն՝ պարտատերը գրավի միջոցով իրավունք ունի ստանալ բավարարում գրավի առարկայի արժեքից՝

Գրավի բնույթի վերաբերյալ շարունակական վեճն ունի ոչ միայն տեսական նշանակություն, այլ նաև գործնական: Առավել կարևոր է հասկանալ դրա գործնական նշանակությունը: Ճանաչելով գրավի իրավունքի իրային լինելը՝ դրավրա տարածում ենք իրային իրավահարբերությունների բնորոշ առանձնահատկությունները և համապատասխանաբար նույնը կարելի է պնդել գրավի պարտավորական լինելը ճանաչելու դեպքում: Այսպիսով՝ գրավի իրավունքը դիտելով որպես իրային, հնարավորություն է ստեղծվում գրավատուի համար օգտագործել գրավի առարկան դրա նշանակությանը համապատասխան, չէ որ իրային իրավահարաբերությունները օժտված են բացարձակության հատկանիշով և սեփականատերն ազատ է իրականացնելու իր սեփականության իրավունքը: Սակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ գրավատուն չի օգտվում սեփականության ատրիբուտ հանդիսացող տիրապետման իրավունքից, քանի որ եթե գրավատուն ոչնչացնի գրավի առարկան կամ այն վաճառի մի այլ երրորդ անձի, ապա գրավի պայմանագիրը կդադարի գոյություն ունենալ: Գրավի առարկայի

ոչնչացմամբ կվերանա նաև գրավի վերաբերյալ կնքված լրացուցիչ համաձայնությունը:

Այսպիսով գրավի՝ որպես պարտավորության ապահովման միջոցի բնույթի վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Հեղինակներից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր անհատական մոտեցմամբ և անհատական հիմնավորումներով: Արդյունքում վերոնշյալ վերլուծություններից եզրահանգում ենք, որ գրավի իրավունքն իր մեջ պարունակում է թե պարտավորական և թե իրային իրավահարաբերությունների տարրեր: Այսինքն՝ պետք է ճանաչել գրավի երկակի բնույթը: Սակայն այստեղ էականը ոչ թե գրավի իրային կամ պարտավորական իրավունքի տարանջատումն է, այլ շեշտադրումը դրա ապահովող գործառույթին: Չէ որ գրավի իրավունքը արժևորվում է այնքանով, որքանով որ այն ապահովում է հիմնական պարտավորությունը: Կարծում ենք, որ այս ամենը պետք է մտածելու տեղիք տա մեր օրենսդիրն գրավի իրավունքն ամրագրել նաև «Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին» բաժնում, ինչպես արված է մի շարք արտասահմանյան օրենսդրական համակարգերում՝ չիեռացնելով այն «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ» բաժնից: «Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին» բաժնում ամրագրված են նաև այնպիսի պարտավորության ապահովման միջոցներ, ինչպիսիք են տուժանքը, պահումը, երաշխավորությունը, երաշխիքը, նախավճարը: Ավելի տրամաբանական կլինի գրավը ամրագրել նաև հենց այս պարտավորությունների ապահովման միջոցների կողքին, քանի որ թե՛ գրավի և թե՛ վերոնշյալ միջոցների գործառույթը հիմնական պարտավորության ապահովումն է: Արդյունքում այս քայլի միջոցով կկարողանանք ճանաչել գրավի երկակի բնույթը և շեշտադրել գրավի կարևորագույն գործառույթը՝ այն է պարտավորության ապահովումը:

ՀՈՒՆԻՐՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն

- ¹ Տե՛ս Դ.И. Мейер, Русское Гражданское право, Статут, Москва, 2000, с. 544-548.
- ² Տե՛ս В.Н. Кастальский, Залог Исключительных прав, Статут, с. 9-11.
- ³ Տե՛ս Ռուսաստանի Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 336 մաս 1-ին, 2-րդ (Гражданский кодекс Российской Федерации):
- ⁴ Տե՛ս www.legifrance.gouv.fr, Code Civile Article 2393 (Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 2393):
- ⁵ Տե՛ս Л.А. Кассо, Понятие о залоге в современном праве, Статут, 1999, с. 22-23:
- ⁶ Տե՛ս Вишневский А. А., Залоговое право / А. А. Вишневский, – М., БЕК, 1995, с. 17.
- ⁷ Տե՛ս Договорное право, Книга первая: Общие положения / М.И. Брагинский, В.В. Витрянский, -М., Статут, 2011, с. 847.
- ⁸ Տե՛ս Пустомолотов И.И., Правовая природа залога как средства обеспечения обязательств / И.И. Пустомолотов // Известия Тульского государственного университета. Серия «Экономические и юридические науки», 2013, № 1-2, с. 86-90.



RESUME - РЕЗЮМЕ

THE DUAL NATURE OF THE PLEDGE AS A MEANS OF SECURING DEBT

Taguhi Afajanyan

French University of Armenia Foundation, Law, Bachelor

In the context of this scientific article, the classical means of debt security, pledge right will be studied. Within the framework of the next scientific work, the dual nature of the pledge right as a means of debt security will be discussed; this will be more accentuated in the work. A historical sketch will be made in the etymology and historical sources of the pledge right. In addition, the approaches of those authors who expressed their views on the problematic nature of the pledge right, found their place in numerous works, will be presented in detail. Within the framework of this scientific work, an analysis will be made of the approaches demonstrated by different countries, formed with respect to the duality of the pledge right. International experience and formed practice will be explored. In the process of the above mentioned studies, the positions expressed by the Court of Cassation and the European Court of Human Rights, which are key in connection with the following problem will also be raised. The purpose of this scientific work is to find out the nature of the right of pledge, which will enable us to determine its correct place in the legislative system, and will also provide an opportunity to determine the norms and legal relations applied to it. The main problem of the latter is to identify points of view that have found a place in the theory, which can be key in its nature.

Key words: pledge right, dual nature of pledge, debt security, legislative system

ДВОЙСТВЕННЫЙ ХАРАКТЕР ЗАЛОГА КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ ПОГАШЕНИЯ ЗАДОЛЖЕННОСТИ

Тагуи Афаджанян

*Фонд «Французский университет в Армении»,
юридический факультет, бакалавр*

В настоящей научной статье затронута тема классического средства обеспечения погашения задолженностей – право залога. В рамках настоящей научной работы проведен анализ подходов, продемонстрированных судебными системами различных стран относительно двойственности права залога. Нами исследован международный опыт и сформированная практика. В процессе выше указанных исследований рассмотрены позиции Кассационного суда и Европейского суда по правам человека, имеющие ключевое значение в связи с изучаемой проблемой. Цель данной научной работы – выяснить характер права залога, что предоставит нам возможность определить его место в законодательной системе, а также применяемые к нему нормы и правоотношения. При изучении характера права залога основная проблема состоит в том, чтобы выявить точки зрения, нашедшие место в теории, имеющие ключевое значение для его определения.

Ключевые слова: право залога, двойственный характер залога, средства обеспечения погашения задолженности, законодательная система.

Բանալի բառեր - գրավի իրավունք, գրավի երկակի բնույթը ,սպիրավորության աստիճանի միջոցներ, օրենսդրական համակարգ: